

Կ-542<sup>9</sup>-31.03.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«ԳԵՈՂԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**Հոդված 1.** «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» 2001 թվականի մայիսի 2-ի N ՀՕ-179 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի ե) կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին պարբերությունից հանել «Անշարժ գույքի» բառերը, «դ» կետն ուժը կորցրած ճանաչել, իսկ «թ» կետից հանել «և դրանց պահպանմանն ուղղված միջոցառումների վերահսկողությունը» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 13-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «կոմիտեն՝ գեոդեզիական պետական տեսչության միջոցով» բառերը փոխարինել «գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերով:

2. 2-րդ մասի «է» կետից հանել «, բացառությամբ անշարժ գույքի միավորի սահմաններում կադաստրային քարտեզագրական աշխատանքների» բառերը:

3. 3-րդ մասում «Գեոդեզիական պետական տեսչությունն» բառերը փոխարինել «Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտում վերահսկողություն իրականացող տեսչական մարմինն» բառերով, իսկ «բ» կետն ուժը կորցրած ճանաչել և մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «գ» և «դ» կետերով՝

«գ) դադարեցնել պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների կատարումը, եթե դրանք իրականացվում են առանց համապատասխան թույլտվության կամ նորմատիվային փաստաթղթերի պահանջների խախտմամբ, կազմել համապատասխան ակտեր, ներկայացնել առաջարկություն տեղագրական քարտեզագրման և հողաշինարարական աշխատանքների իրականացման որակավորված գործունեության դադարեցման կամ կասեցման վերաբերյալ:

դ) տեսչական մարմնի ղեկավարը՝ գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքներով զբաղվող պետական կազմակերպություններին, որակավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց տալ աշխատանքների կատարման կարգի և կիրառվող տեխնոլոգիայի, ինչպես նաև այդ աշխատանքների արդյունքում ստացված տվյալների ու նյութերի հավաքման, հաշվառման, պահպանման,

բազմացման և օգտագործման, թերությունների վերացման վերաբերյալ անհրաժեշտ ցուցումներ:».

4. 4-րդ մասում «սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «սահմանվում է օրենքով» բառերով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երկրորդ ընթերցում  
Կ-542<sup>9</sup>-31.03.2020-ՏՀ-011/0  
Նախագիծ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«ԳԵՈՂԵՉԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵՉԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» 2001 թվականի մայիսի 2-ի N ՀՕ-179 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի ե) կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին պարբերությունից հանել «Անշարժ գույքի» բառերը, «դ» կետն ուժը կորցրած ճանաչել, իսկ «թ» կետից հանել «և դրանց պահպանմանն ուղղված միջոցառումների վերահսկողությունը» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 13-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «կոմիտեն՝ գեոդեզիական պետական տեսչության միջոցով» բառերը փոխարինել «գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերով.

2. 2-րդ մասի «է» կետից հանել «, բացառությամբ անշարժ գույքի միավորի սահմաններում կադաստրային քարտեզագրական աշխատանքների» բառերը.

3. 3-րդ մասում «Գեոդեզիական պետական տեսչությունն» բառերը փոխարինել «Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտում վերահսկողություն իրականացող տեսչական մարմինն» բառերով, իսկ «բ» կետն ուժը կորցրած ճանաչել և մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «գ» և «դ» կետերով՝

«գ) դադարեցնել պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների կատարումը, եթե դրանք իրականացվում են առանց համապատասխան թույլտվության կամ նորմատիվային փաստաթղթերի պահանջների խախտմամբ, կազմել համապատասխան ակտեր, ~~տեսչական մարմնի~~

**Ղեկավարին**— ներկայացնել առաջարկություն տեղագրական քարտեզագրման և հողաշինարարական աշխատանքների իրականացման որակավորված գործունեության դադարեցման կամ կասեցման վերաբերյալ.

դ) տեսչական մարմնի ղեկավարը՝ գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքներով զբաղվող պետական կազմակերպություններին, որակավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց տալ աշխատանքների կատարման կարգի և կիրառվող տեխնոլոգիայի, ինչպես նաև այդ աշխատանքների արդյունքում ստացված տվյալների ու նյութերի հավաքման, հաշվառման, պահպանման, բազմացման և օգտագործման, թերությունների վերացման վերաբերյալ անհրաժեշտ ցուցումներ:».

4. 4-րդ մասում «սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «սահմանվում է օրենքով» բառերով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: